

Բաց և փակ տնտեսությունների հավասարակշռությունների համադրումը

Գնահատելու համար ապրանքների ու կապիտալի միջազգային շուկայում մասնակցության առավելությունը, պարզենք, թե ինչպիսին կլինեն հավասարակշիռ բաշխումը, եթե տնտեսությունը գտնվեր ավտարկիայում:

Երբ երկիրն ապրանքների ու ֆինանսական ակտիվների միջազգային շուկա էլք չունի, ապա եկամտի վերաբաշխումը կարող է իրականացվել միայն ներքին ֆինանսական շուկայի միջոցով:

Հավասարակշիռ տոկոսադրույքը փակ տնտեսությունում

Քանի որ Մոդելում սպառողները նույնական են, ապա փակ տնտեսությունում պարտքը կամ վարկավորումը անհրաժեշտաբար պետք է լինեն հավասար զրոյի: Վերջինը նշանակում է, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում յուրաքանչյուրի սպառումը ճշտորեն հավասար է իր պաշարին: Հետևաբար՝ փակ տնտեսությունում տոկոսադրույքը հավասարակշռվում է, երբ սպառումը հավասարվում է պաշարին՝ $C_1 = Y_1, C_2 = Y_2$:

Էյլերի հավասարման մեջ վերջինները տեղադրելով՝ ստանում ենք.

$$\frac{u'(Y_1)}{\beta u'(Y_2)} = (1 + r^*)$$

որտեղ r^* փակ տնտեսության տոկոսադրույքն է:


Քանի որ փակ տնտեսությունում սպառումը հավասար է պաշարին, ապա փակ տնտեսության բյուջետային սահմանափակման կորը պետք է անցնի օժտվածության կետով:

Գծ. 5-ում պատկերված է ավտարկիայում վարկառու երկրի դեպքը: Քանի որ օժտվածության կետում անտարբերության կորի թեքությունն ավելի մեծ է, քան միջազգային տոկոսադրույքն է, ապա ավտարկիայում հավասարակշիռ տոկոսադրույքը միջազգային տոկոսադրույքից բարձր կլինի՝ $r^* > r$:

Այսպես: Քանի որ հնարավորության դեպքում սպառողները կապիտալի միջազգային շուկայից պարտք են վերցնելու, ապա հնարավորության բացակայության դեպքում տնտեսությունում կլինի կապիտալի չբավարարված պահանջարկ: Իսկ վերջինը ենթադրում է, որ ավտարկիայում տոկոսադրույքն ավելի բարձր կլինի:

Արդյունքում՝ վարկառու երկիրն ավտարկիայում գտնվում է գծ. 5-ի Y կետում, որում հասարակության բարեկեցությունն ավելի ցածր է, քան բաց տնտեսությանը համապատասխանող E կետում էր:

Գծանկար 5: Վարկատու երկիրն ավտարկիայում




Գծ. 6-ում պատկերված է ավտարկիայում վարկատու երկրի դեպքը: Այս դեպքում ճիշտ հակառակն է. քանի որ օժտվածության կետում անտարբերության կորի թեքությունն ավելի փոքր է, քան միջազգային տոկոսադրույքն է, ապա ավտարկիայում հավասարակշիռ տոկոսադրույքը միջազգային տոկոսադրույքից ցածր կլինի՝ $r^* < r$:

Այս դեպքում, քանի որ հնարավորության դեպքում սպառողները կապիտալի միջազգային շուկայում վարկ են տրամադրելու, ապա հնարավորության բացակայության դեպքում տնտեսությունում կլինի կապիտալի ավելցուկային առաջարկ, ինչը ենթադրում է, որ ավտարկիայում տոկոսադրույքն ավելի ցածր կլինի:

Դարձյալ՝ ավտարկիայի հավասարակշռությանը համապատասխանող Y կետում հասարակության բարեկեցությունն ավելի ցածր է, քան բաց տնտեսությանը համապատասխանող E կետում էր:

Գծանկար 6: Վարկատու երկիրն ավտարկիայում



Այսպիսով՝ ավտարկիայի տոկոսադրույքը միջազգային տոկոսադրույքից բարձր կլինի վարկառու երկրում և ավելի ցածր կլինի վարկատու երկրում:

Ընդ որում, և՛ վարկատու, և՛ վարկառու երկրները շահում են կապիտալի միջազգային շուկա ելքի հնարավորությունից: Այդ շահը դրսևորվում է նրանում, որ կապիտալի միջազգային շուկան հնարավորություն է տալիս հարթել միջժամանակային սպառումը:

Տնտեսության բաց լինելուց շահն այնքան ավելի մեծ է, որքան մեծ է ավտարկիայի ու բաց տնտեսության տոկոսադրույքների տարբերությունը: Բայց որքան մեծ է տոկոսադրույքների տարբերությունը, այնքան մեծ կլինի ընթացիկ հաշվի ավելցուկը վարկատու երկրի դեպքում և պակասորդը վարկառու երկրի դեպքում:

Տնտեսական ցնցումների ազդեցությունն ընթացիկ հաշվի վրա

Միջազգային տոկոսադրույքի աճ

Տոկոսադրույքի աճի դեպքում ներկա սպառումը դառնում է համեմատաբար թանկ: Արդյունքում՝ տոկոսադրույքի աճի դեպքում սպառողները կրճատում են ներկա սպառումը՝ ընդլայնելով ապագա սպառումը: Սա տոկոսադրույքի սպառման փոխարինման էֆեկտն է:

Մինևսյն ժամանակ, տոկոսադրույքի աճի դեպքում պարտապան երկրի պարտքի սպասարկման ծախսերը մեծանում են, ինչի հետևանքով պարտապան երկրի սպառումը կրճատվում է: Համապատասխանորեն, տոկոսադրույքի աճի շնորհիվ վարկատու երկիրն ավելի բարձր տոկոսային եկամուտ է ստանում, ինչը նշանակում է, որ վարկատու երկրի սպառումն ընդլայնվում է: Սա էլ տոկոսադրույքի եկամտային էֆեկտն է:

Պարտապան երկրի դեպքում, երբ տոկոսադրույքն աճում է, ապա և՛ փոխարինման էֆեկտը, և՛ եկամտային էֆեկտը հանգեցնում են ներկա սպառման կրճատմանը: Արդյունքում՝ առաջին փուլում ընթացիկ հաշվի պակասորդը, որը եկամտի ու սպառման տարբերությունն է, կրճատվում է: Այսինքն՝ պարտապան երկրի դեպքում, երբ տոկոսադրույքն աճում է, պարտքի մակարդակը կրճատվում է: Համապատասխանորեն, տոկոսադրույքի կրճատման դեպքում պարտապան երկրի պարտքի մակարդակը կընդլայնվի:

Վարկատու երկրի դեպքում տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը միարժեք չէ: Այսպես, երբ տոկոսադրույքը բարձրանում է, ապա վարկատու երկրի սպառման վրա փոխարինման էֆեկտը բացասական է ներգործում, իսկ եկամտի էֆեկտը՝ դրական: Հետևաբար՝ ընթացիկ հաշվի ավելցուկը կընդլայնվի, եթե փոխարինման էֆեկտը գերակշռում է սպառման էֆեկտին: Իսկ հակառակ դեպքում ընթացիկ հաշվի ավելցուկը կնվազի:

Մասնավոր դեպքում, երբ երկիրը սկսնապես պարտք կամ վարկ չունի՝ $B_1 = 0$, իսկ սպառման հարթեցումը կատարյալ է՝ $\beta = 1/(1+r)$, ապա քանի որ $\bar{C} = \frac{(1+r)Y_1+Y_2}{2+r}$, ստանում ենք.

$$\frac{d\bar{C}}{dr} = \frac{Y_1 - Y_2}{(2+r)^2}$$

Այսպիսով՝ տոկոսադրույքի աճի դեպքում սպառումն աճում է, երբ ներկա եկամուտն ապագա եկամտից մեծ է, այսինքն՝ երբ երկիրը վարկատու է: Հակառակ դեպքում, երբ ներկա

եկամուտն ապագա եկամտից փոքր է, այսինքն՝ երբ երկիրը պարտապան է, ապա սպառումը կրճատվում է:

Այսինքն՝ վարկատու երկրի դեպքում եկամտային էֆեկտը գերակշռում է փոխարինման էֆեկտին, որի արդյունքում առաջին փուլում սպառումն աճում է, ու ընթացիկ հաշվի ավելցուկը նվազում է:

Պարտապան երկրի դեպքում, ինչպես միշտ, եկամտային ու փոխարինման էֆեկտները կրճատում են սպառումը և հետևաբար՝ նվազեցնում են ընթացիկ հաշվի պակասորդը:

Ապագա սպառման վերարժևորում

Կյանքի սպասվող տևողությունն ամենուր աճում է, ուստի՝ մարդիկ ավելի մեծ չափով են կարևորում ապագա սպառումը: Ապագայի այդ վերարժևորումը հետևանք է նրա, որ ավելի մեծ է հավանականությունը, որ ապագայում մարդիկ ողջ կլինեն, որպեսզի կարողանան սպառել:

Մոդելի առումով ապագա սպառման վերարժևորումը համարժեք է դիսկոնտավորման β դրույքի աճին: Այդ դեպքում մարդիկ նախընտրում են ներկայի համեմատ ապագա ավելի բարձր սպառում, այսինքն՝ C_1/C_2 հարաբերությունը կրճատվում է:

Երբ β աճում է, ապա փոխարինման սահմանային դրույքը՝ $\frac{u'(c_1)}{\beta u'(c_2)}$, նվազում է: Միջազգային տոկոսադրույքի տրված մեծության համար էյլերի հավասարումը՝ $\frac{u'(c_1)}{\beta u'(c_2)} = (1 + r)$, կբավարարվի, եթե C_1 նվազի, իսկ C_2 ընդլայնվի, այսինքն՝ C_1/C_2 հարաբերությունը կրճատվի:

Ներկա սպառման կրճատումը դրական կազդի ընթացիկ հաշվի վրա: Արդյունքում՝ պարտապան երկիրը կնվազեցնի պարտքի մակարդակը, իսկ վարկատու երկիրը կընդլայնի արտաքին վարկավորման մակարդակը:

Եկամտի աճ

Դիցուք սկզբնապես $Y_1 = Y_2 = Y$, այսինքն՝ եկամուտը երկու ժամանակաշրջաններում նույնն է: Երբ $\beta = 1/(1 + r)$, ապա սպառումը նույնպես երկու ժամանակաշրջաններում նույնն է: Հետևաբար՝ $Y = \bar{C}$, և ընթացիկ հաշիվը երկու ժամանակաշրջաններում կլինի հավասարակշռված՝ $CA = 0$: Այդ դեպքում երկիրը արտաքին պարտք կամ վարկ չի ունենա:

Այժմ համարենք տեղի է ունենում եկամտի դրական ժամանակավոր ցնցում, այսինքն՝ ապագայում եկամուտը վերադառնալու է իր նախկին մակարդակին: Նման ցնցում օրինակ տեղի է ունենում, երբ առևտրի պայմանները անակնկալ բարելավվում են: Այսպիսով՝

$$Y_1 = Y' > Y_2$$
$$CA_1 = \frac{Y' - Y_2}{2 + r} > 0$$

Այսպիսով՝ եկամտի դրական ցնցման դեպքում ընթացիկ հաշիվն առաջին փուլում դառնում է դրական: Արդյունքում երկիրը խնայում է իր հավելյալ եկամտի մի մասը՝ որպեսզի ապագայում կարողանա սպառել ավելին և դրանով իսկ հարթի սպառումը:

Ինչ կլիներ, եթե եկամտի աճը լիներ մշտական: Նման իրավիճակ օրինակ ստեղծվում է արտադրողականության աճի դեպքում: Այս դեպքում ներկա և ապագա եկամուտները շարունակում են մնալ միմյանց հավասար, թեպետ երկուսն էլ ավելի բարձր մակարդակ ունեն: Այս դեպքում, արդեն, երկիրը սպառումը հարթում է երկու ժամանակաշրջանների հավելյալ եկամուտն ամբողջովին սպառելով: Այժմ արդեն հավելյալ եկամուտը խնայելու անհրաժեշտություն չկա:

Այսպիսով՝ եկամտի ժամանակավոր դրական ցնցումը ընդլայնում է ընթացիկ հաշվի մնացորդը, իսկ մշտական ցնցումը ընթացիկ հաշվի մնացորդի վրա չի ազդում: